



ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36
հեռ. (0264) 6-15-11

էլ. ասյուգե: info_gavar@aarhus.am

N AA - 004

« 16 » Ապրիլի 2015թ

ՀՀ Բնապահպանության նախարար
պարոն Ա. Գրիգորյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գրիգորյան,

2010թ. ՀՀ բնապահպանության նախարարությունը վարկային միջոցներով ձեռք բերեց «Վոթեր մաստեր» սարքը, որի օգնությամբ պետք է մաքրվեին Սևանա լճի հարակից ջրածածկ տարածքները:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրինակի համաձայնագիրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ խնդրում եմ Գավառի Օրինու կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն հետևյալի մասին.

- 1 Որտե՞ղ է հիմա գտնվում «Վոթեր մաստեր» սարքը,
- 2 Մինչև այսօր՝ 15-ը ապրիլի, ի՞նչ մակերեսի անտառային տարածք է մաքրվել և ում կողմից՝ ըստ տեղամասերի, կատարողների, ծախսված գումարիների:
- 3 «Վոթեր մաստեր»-ի օգնությամբ մաքրված տարածքների ընդհանուր մակերեսը՝ ըստ տեղամասերի,
- 4 «Վոթեր մաստեր» սարքի շահագործման ծախսերը /շահագործման օրվանից մինչև հիմա ծախսված գումարները/,
- 5 Ինչքա՞ն ջրածածկված անտառային տարածք է ընդհանուր առմամբ մնացել մաքրելու (ըստ տեղամասերի),
- 6 2015թ.-ին ինչքա՞ն տարածքներ են նախատեսված մաքրելու և որ տեղամասերում են մաքրման աշխատանքներ իրականացվելու (կատարողները և նախատեսված գումարները),
- 7 Ջրածածկ տարածքների մաքրումից առաջացած փայտանյութը ի՞նչ նպատակներով է օգտագործվել և օգտագործվում ,
- 8 Արդյո՞ք մինչև վերջ մաքրվում և ջրածածկման ենթակա գոտիներից հեռացվում են հատված ծառերի արմատները և ու՞ր:
- 9 Արձանագրվել են, արդյո՞ք, ջրածածկ կամ ջրածածկման ենթակա տարածքների մաքրման աշխատանքների ոչ պատշաճ իրականացման դեպքեր:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով,

Գավառի Օրինու կենտրոնի համակարգող

Լ. Ասոյան